AMX Armenia Securities Exchange

# ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

**19 հոկտեմբերի 2021 թվականի N ՏՊ-012-10/21**

**ք. Երևան**

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին**

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) 2021 թվականի հոկտեմբերի 19-ի դիմումը 1,099,000,030 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 230 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, 4,778,261 հատ Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման բաժնի ղեկավարի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 19-ին ներկայացված եզրակացությունը.

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 1,099,000,030 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 230 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, 4,778,261 հատ Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMUNIBPK2ER3 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով UNIBP2 բորսայական հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. հոկտեմբերի 20-ին սովորական բաց ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով ոչ մրցակցային պայմանով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**